Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 3
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ 1

Ն ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցմամբ գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Ջրվեժ

«07» «օգոստոսի» 2017թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թադևոսյան, Գ.Բաղալյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Ն ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման գնահատման արդյունքների հաստատման մասին

Տեղեկատվություններ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ

1.ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն «Արգոհշին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող:

2. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել որ ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման մասնակից՝ «Արգոհշին» ՍՊԸ-ի ներկայացրած հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում որակավորման պահանջներին «Մասնագիտական փորձառություն», «Տեխնիկական միջոցներ», «Աշխատանքային ռեսուրսներ» և «Ֆինանսական միջոցներ» չափանիշներով:

3.ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 47-րդ կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին առաջարկելով մինչև 2017 թվականի օգոստոսի 9-ի ժամը 10:30-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ:

Մասնավորապես.

«Մասնագիտական փորձառություն» - ներկայացված փաստաթղթերի պատճեները կնքված և ստորագրված չեն ներկայացնողի կողմից:

«Աշխատանքային ռեսուրսներ» - ներկայացվել են աշխատակիցների համաձայնագրերի պատճեները, փաստաթղթերի պատճեները կնքված և ստորագրված չեն ներկայացնողի կողմից:

«Տեխնիկական միջոցներ»- ներկայացված փաստաթղթերի պատճեները կնքված և ստորագրված չեն ներկայացնողի կողմից, Հավելված 5.1-ը բացակայում է փաթեթից:

«Ֆինանսական միջոցներ» - չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

4.Նիստը ընդհատվում է մինչև 2017 թվականի օգոստոսի 9-ի ժամը 10:30-ն՝ շտկված փաստաթղթերի հիման վրա հայտի գնահատման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան

Անդամներ՝ Ս.Թադևոսյան

Գ.Բաղալյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան